

Ապարան: Այսպէս եւ ոմանք ի գիւղից Կարնոյ, զի այլքն զետեղեցան շուրջ Ախլձխա քաղաքաւ, եւ յԱղզոր եւ ի Խըրդզ եւ յԱխալքէլէք, եւ որ այլ եւս: Եղեն եւ ոմանք եւ լինիցին, որ նեղեալ յառժամանակեայ կարօտութենէ հացի յետ անդրէն դարձան յերկիր իւրեանց յառաջին, ընդունելութիւն մեծ գտեալ յօսմանցոյն: Սակայն ընդհանուր տեսեալ Կարս ոչ այնչափ հաւատարիմ գտաւ ի խոստմանն որչափ Կարին եւ Պայազիտ:

Գառնամ այժմ յափունս Ախուրենայ ի բանակտեղ կարնեցոց, որք յամեցին մնացին անդր իբրեւ ամիսս երկու, զի ոչ գտանէին սայլբ յուղարկել զնոսս վասն վերահաս արդիւնաբեր աւուրցն մշակաց, որք ի քակտել եւ ի հերկել կային զանդաստանս իւրեանց, եւ ոչ էր իշխան պետութիւնն բունն առնել հաւաքել զսայլս նոցա. զի առ փոքր վնասու ժողովրդեան եկելոյ, մեծագոյն վնաս ի վերայ հասանէր եթէ պահակ ունելով զսայլսն ոտնահար լինէին հնձոց ուստի զեան էր համօրէն զաւառացն: Վասն որոյ մխիթարական բանիւք արգահատէին ոստիկանքն եւ իշխանք, ժոյժ ունելով վայր մի մինչեւ հասցեն սայլբ ի Վրաստանէ, ուր կանուխ վճարին հունձք, թէպէտեւ ի նոցանէ շեղել ինչ շահ, զի յետ հնձոցն խմբովին իջանէին ի Կողբ յաղահատս: Վասն որոյ որք կարողք էին գտին եւ վարձեցին սայլս եւ զնացին. անկարողքն մնացին. ի մերոց հարիւր լիսուն տունք, եւ յայլափառաց տասնապատիկ քան զմերն, միահամուռ իբրեւ հազար ութհարիւր տունք, տարածեալ ընդ բազմափեղիկ կարկատուն վրանօք առ հոսանօք ջրոյն, արեակէզ ի սօթի եւ ջրողղ յանձերան:

Թէպէտեւ շպակասէր հասոյթ հացի յարքունուստ, առ նմին դիւրագին էին եւ ուտելիք, սակայն ծառացաւ բարձրացաւ զանգատն եւ բողոք, նորոգեցաւ յիշատակ սոխոյն եւ խստորոյն եւ պուտկացն Եգիպտոսի, մինչեւ յառակս առնուլ ուրումն թէ դրած սեղան թողինք, փակած դուռ գտանք: Անէժք եւ դղչինք պառաւանց ի վերայ որոց պատճառ եղեն այսմ ամենայնի, ոչ պակասեցին եւ ծանր լուտանք վազեալ զինեւ: Մոպսեսեան երկայնամտութեան պէտք էին անխոռով տանել մարդկեղէն անժուժութեան մխիթարել սփոփել զնոսս, եւ առ նմին աղաչել զերեսս իշխանաց նստելոց ի Կիւմրի ջանալ յօգնութիւն տառապելոյ ժողովրդեան: Ի վհատութեան սրտիս այս ինչ զօրավիզն էր, զի դօսնքն եւ ազնուաբարոյք խրախոյս տային ինձ մի լքանել, այլ արիանալ մինչեւ ի կատարած:

Յայսմ ժամանակի գրէ ինձ հ[այր] Նիկողայոս յԱխլձխայէ ի դիմաց բնիկ եւ նորահաւաք ժողովրդեան քաղաքին, զի ի կարգի եղեալ զգործ դուռնն անյապաղ փութացայց հասանել առ նոսս վասն լաւ եւս խորհել եղեալ զգործ հասարակաց: Քանցի որովհետեւ առաջին խորհուրդ իմ էր անցանել ի Շիրակայ լօռի եւ ի Փամբակ, տեսանել զմերսն, եւ խորհել վասն որոց բունն հարին, ուր շկարէի զնալ վասն միջանկեալ քառանդինին զաւուրս շրեքտասան մինչեւ գլխաւորեալ զիրս ժողովրդեան. եւ զի անտի խնդրէի անցանել ի Թիֆլիս եւ հանդիպել կուսակալին, եւ ապա զնալ յԱխլձխա: Այժմ ստիպաւ կոչնել զիս անդր, յառաջ քան զամենայն տեղիս:

Յաւուրս յայտոսիկ յօգնտոսի 2 եհաս նոր վերակացու գաղթական ժողովրդեան Մաջո Անուով, ում յանձն էր խնամ ունել եկաց յամենայն սահմանաց Օսմանեանց մինչեւ հասցեն ուր երթալոցն: Որոյ յայց ելեալ ի բանակն պատուէր ետ ամենեցուն ընտրել ազատօրէն այր իւրաքանչիւր ուր եւ յօժարեացին զնալ ի Ռուսաց իշխանութեան: Ի հայոց իբրեւ երկերիւր տուն գրեցան ի համար Փամբակու. սակայն ոմանք եւ ի մերոց, եւ առ սակաւ սակաւ զորս սայլիւք եւ զոռս եզամբք եւ զբաստուք եղեւ հասուցանել ի տեղի իւրեանց, եւ զյուրվս ցրուել ի մօտակալ գիւղօրէս մինչեւ խուն մի նորոգեցի Ախլձխա: Եւ զի ի մօտել աւուրց ցրտութեան մի մնացեն բաղօթեալ: Եւ իմ կատարեալ ի Շիրակ գտօն Իսկուհուտն անցի փութապէս յԱխլձխա, զորոյ զհանգամանսն լիագոյնս գրեցից ի դէպ ժամու:

Չուգաւոր համարիմ գրելոցս յիշեցուցանել եւ վասն Սերոբէի վ[ա]րդ[ապետի], որ երբեմն զպրոցական էր եւ այժմ վարդապետ Հայոց եւ ար-